

ԿԱՐԾԻՔ

Հովհաննես Վահագնի Հովհաննիսյանի

«Վաղ քրիստոնեական դավանաբանական վեճերի կրոնագիտական վերլուծություն (II դարի -V դարի I քառորդ)» պատմական գիտությունների դոկտորի աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք զլուխներից, համապատասխանաբար երկուսում չորսական և վերջինում երեք ենթազլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների եվ գրականության ցանկից (448 էջ):

Ատենախոսություն թեման արդիական է ներկա Հայաստանի Հանրապետության գործընթացների համապատկերում, երբ ստեղծվել են պայմաններ՝ հումանիտար մտքի ազատ զարգացման համար. Զայ Եկեղեցին մուտք է գործում հայ ազգային կյանքից ներս՝ երկրի տարբեր ոլորտներում իր ներկայությունն ապահովելով և վերաբերնացնելով ազգային-եկեղեցական ավանդությունները հասարակության մեջ: Հայագիտության մեջ առաջին անգամ վերլուծության են ենթարկվել քրիստոսաբանական վեճերի ձեւավորման առանձնահատկությունների դրսերման ձեւերը և վիճաբանությունների էվոլյուցիոն գործընթացները: Արդիական են նաև Եկեղեցի-պետություն հարաբերությունների կարգավորումները՝ ավանդական կարծրատիպերի մերժմամբ, և հիմնախնդրի նորովի ներկայացումը:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները ընդգրկում են 160-420-ական թվականները, որի ընտրությունը հիմնավորված է: Այս շրջանի քրիստոսաբանական դավանական վեճերի հիմքը կազմում է ալեքսանդրիական ավանդության և անտիոքյան քրիստոսաբանության հայացքների բախումը: Թեմայի ուսումնասիրության տարածաշրջանային ուղղվածությունը թույլ է տալիս պատմական տվյալ երևույթը գնահատել քրիստոնեական երկրաշրջանի մասշտաբով և բացահայտել նրա տեղային առանձնահատկությունը:

Հիմնահարցի ուսումնասիրվածությունը ներկայացվում է երեք փուլերից՝ 1) 1890-1910-ական թվականների միջակայրում, երբ վիճաբանություններին և դավաբանական ըմբռնումներին անդրադարձել է Երվանդ Վարդապետ Տէր-Մինասյանցը; 2) XX դարի երկրորդ կեսի պատմագիտական, պատմաբանասիրական և հայրաբանական

աշխատությունները, որոնցում աստվածաբանական և դավանաբանական հիմնահարցերը քննարկվել են «քուլատրելի սահմաններում»; 3)Հետխորհրդային շրջանում ձեռնարկվել են առաջին քայլերը, սակայն հատվածական և ընդհանուր խնդիրների համատեքստում:

Աշխատության հիմքում ընկած են տարատեսակ աղբյուրների և գրականության պատմաքննական և պատմավերլուծական մեթոդները, որոնց կիրառությամբ համակողմանի հետազոտվել են քննարկվող հիմնախնդիրները:

Ատենախոսության գիտական նորույթը 160-430-ական թվականների վաղ քրիստոնաբանական ըմբոնումների, դոկտրինալ հայացակարգերի և դավանական վեճերի համակարգային կրոնագիտական ու աստվածաբանական վերլուծությունն է և նորովի արժենորումը: Առաջադրված են գիտական նորույթի տարրերը:

Ատենախոսության աղբյուրագիտական հիմքը կազմում են բազմաբովանդակ սկզբաղյուրներ, վավերագրերի ժողովածուներ, աստվածաբանական և պատմադավանական բազմաթիվ ուսումնասիրություններ և հոդվածներ, ինչպես նաև տիեզերական վավերագրային արձանագրությունները: Ուսումնասիրությունում օգտագործվել են բազմաթերու փաստաթղթեր և տարաբնույթ նյութեր:

Հեղինակը, օգտագործելով տարրեր աղբյուրներ, ուսումնասիրություններ, մենագրություններ, հոդվածներ և հրապարակումներ, կարողացել է ստեղծել ամբողջական ուսումնասիրություն: Դրա հիման վրա կարող են նաև կազմվել նոր հայագիտական մեթոդական ձեռնարկներ և ուսումնասիրություններ:

Աշխատանքը շարադրված է գրագետ, պահպանված են խնդիրի լուսաբանման հաջորդականության ընդունված նորմերը:

Առաջին գլուխը՝ «Եկեղեցու ներքին կյանքը եվ դավանական կացությունը Ա դարի երկրորդ կեսից մինչև IV երկրորդ կես» բաղկացած է չորս ենթագլուխներից: Առաջին ենթագլուխ՝ «II-III դարերի քրիստոնաբանական ըմբոնումները և մեկնաբանական ուղղությունները» ներկայացվել են քրիստոնաբանական հարցերի վեճերը:

Այստեղ ատենախոսը քրիստոնաբանական վեճերը քննարկել է ոչ թե ավանդական կարծրատիպերի դիրքերից, որոնք շարադրվել են եկեղեցական ավանդույթների և հակադիր վարդապետությունների դիրքերից, այլ արդի աստվածաբանության մեթոդաբանական դիրքերից: Այսինքն՝ 1) հավատի և պատմականության

հարաբերությունը, 2) Քրիստոսի անձի և Քրիստոսի ծառայության հարաբերության ուսումնախությունը, 3) Քրիստոսի մարդեղացման գաղափարի ընկալման քառացի բնույթը:

Ըստ ատենախոսի՝ նոր քայլ պետք է համարել վաղ շատագովների քրիստոսաբանական վարդապետությունը: Այս առումով, III դարի աստվածաբան Որոգինեար, ելակետ ընդունելով, որ Ս. Երրորդությունը՝ Հայրը, Որդին, Ս. Հոգին հանդիսանում են ամեն մի սրբության ակունքը, առաջին անգամ ձեսկերպել է երրորդաբանական բանաձևում՝ Աստված-Լոգոս-Որդի-Ս.Հոգի (Էջ 47):

Ըստ աստվածաբան Տերտուլիանոսի՝ Աստված մեկն է՝ միասնական և անբաժան Ս. Երրորդությունը, որի երեք անձերը գտնվում են մշտական միության և հավասարագոր հարաբերության մեջ: Անպատճառական Հայր Աստված ոչնչից չի առաջացել և չի ծնվել: Որդին ծնվել է և հայտնվել է մարդկանց, իսկ Ս. Հոգին բխել է Հայր Աստծուց՝ Որդու միջոցով (Էջ 47, 48):

Զատագովների Լոգոսի քրիստոսաբանական վարդապետությունը մշակվել է Հայր Աստծու բացարձակության հենքի վրա, իսկ Բան-Լոգոսը նրա նկատմամբ որպես կույզել է որպես ենթակա սկիզբը:

Երկրորդ ենթագլխում՝ «Եկեղեցու ներքին կյանքը IV դարի 60-70- ական թվականներին» ներկայացվում է քրիստոնեական Արևելքի դավանաբանական հոսանքների կողմից կարևոր խնդիրը՝ երրորդաբանական հարցերը: Դավանաբանական ելակետ է համարվում դինամիստական երրորդաբանությունը, բնորոշվող Աստվածաշնչի բառացի մեկնությամբ և մերժող Ս.Հոգին: Այդ պատճառով դարաշրջանի եկեղեցական հայրերը անհաջու պայքար են մղել հակաերրորդաբան հոգեմարտների դեմ: Դարաշրջանի եկեղեցական կյանքում շարունակվել են երեք ազդեցիկ հոսանքների՝ նիկեականների, նմանաբնութենականների և նմանակների դավանական վեճերը: Կ. Պոլսի 361 թ. եպիսկոպոսական ժողովը հոչակեց նմանա կան աստվածաբանության հավատամբը՝ «Որդի Աստված նման է իրեն ծնող Հորը» (Էջ 57):

Հոգիաբանական վարդապետությունը դարձավ 376 թ. Իկոնիայի ժողովի և 379 թ. Հռոմի Դամաս եպիսկոպոսի բանադրության հիմքը: Այսինքն՝ IV դարի 60-70-ական թվականներին ներեկեղեցական կյանքը սկսեց դանդաղ անցնել նիկեականության դիրքերին: Զևսվորվեցին հոգևոր այն պայմանները, որոնց ազդեցությամբ

Երրորդաբանական-դավանաբանական վեճերը աստիճանաբար դուրս էին մղվում եկեղեցուց:

Հաջորդ ենթագլխում «Ապոլինար Լառդիկեցին և քրիստոսաբանական-դոկտրինալ մշակումների փուլի սկիզբը» ներկայացվում է արիոսության դեմ մղվող պայքարի շրջանում IV դարի 60-ական թվականներին քրիստոսաբանական ամփոփ հայեցակարգ: Եպիսկոպոս Ապոլինար Լառդիկեցին հիմք է դրել ըստ ատենախոսի, քրիստոսաբանական դոկտրինալ մշակումների փուլին: Հակաարիոսական պայքարում Ապոլինարի համար ելակետը եղել է Ս. Երրորդության խորհրդական դավանանքը՝ որոշակի առանձնահատկություններով: 1) անձնավորման պարագայում ինքնակա երկու էությունները՝ Աստված Բանը և մարդը, կարող են կատարելապես միավորվել մեկ անձի մեջ, 2) նրա քրիստոսաբանության հիմքում ընկած է անփոփոխ Աստծու և փոփոխական մարդու մեխանիկական միավորման վարդապետությունը, ինչը հանգեցրել է հերձվածող հետևությունների:

Աստվածաբանը միաժամանակ պնդել է, որ «Պաշտամունքի համար աստիճանով կամ տեսրով որևէ տարբերություն չունեցող Հայր Աստծո, Որդու և Սուրբ Հոգու Աստվածային Երրորդությունից զատ չկա այլ բան, և փրկագործելու համար չկա որևէ մեկը» (Էջ 91): Նա պնդել է, որ «Բանը մարմին դարձավ» (Էջ 101): Այդ հիմնահարցը դարձավ դոկտրինալ և դավանաբանական վեճերի, այլև՝ վարդապետության զարգացման հիմքը: 360-ականների վերջին Ապոլինարը շարադրել է քրիստոսաբանական նոր հակեցակարգ, որը կապված է եղել փրկագործական վարդապետության հետ:

Չորրորդ ենթագլուխը վերնագրված է «Քրիստոսաբանության հարցում Ալեքսանդրիական և Անտիոքյան դպրոցների մեթոդաբանական տարակարծության հիմնահարցը»:

Քրիստոնեության երկու նշանավոր դպրոցներում մշակված մարմնացյալ, այսպես էլ մարդացյալ «Բան»-երի քրիստոսաբանական լուծումները կապված էին փրկագործության, հետևաբար Քրիստոսի խոնարհման զարաֆարի հետ, որը վերաբերում է Նրա երկրային կյանքին, առաքելությանը և խաչելությանը: Այն ալեքսանդրիացիների կողմից մեկնաբանվել է որպես Աստված Բանի կողմից «մարմին առնել» և ոչ թե մարդանալ, քանզի «ի կարպարանս Աստուծոյ էր» :

Երկու նշանավոր դպրոցները քրիստոսաբանական լուծումները՝ «Բան-Մարմին» և «Բան-մարդ», իրենց պատմական համատեքստում մեծ դերակատարություն են ունեցել եկեղեցական դասանանքի ձևավորման և զարգացման գործում:

Երկրորդ գլուխ՝ «IV դարի վերջին քառորդի քրիստոսաբանական
դոկտրինալ համակարգերը»

Առաջին ենթագլուխ՝ «Քրիստոսի անձնավորման Դիոդորոս Տարոնացու վարդապետությունը»:

IV դարի 60-70-ական թվականներին ասպարեզ իջան քրիստոսաբանական հակամարտ վարդապետական հայեցակարգերը ալեքսանդրիական դպրոցների ներկայացուցիչներ բուռն կերպով քննարկել է վիճարանական հիմնահարցի երկու հիմնական «Բան-մարմին» և «Բան-մարդ» մոդելները: Այս ժամանակաշրջանը ընդդիմադիր վարդապետությունների մշակման փուլ է:

Անտիոքի աստվածաբանական դպրոցի ականավոր աստվածաբաններից և Ս.Գրքի հեղինակավոր մեկնիչներից մեկը եղել է Դիոդորոս Տարոնացին: Մի կողմից նրան համարել են, «կայսրության արևելյան դիոցեզի ողբարականության հիմնասյուն», մյուս կողմից՝ «նեստորականության ուսուցիչ» (էջ 142, 143): Նա սկզբում պաշտպանել է Քրիստոսի կատարյալ աստվածային բնության վարդապետությունը, իսկ IV դարի 70-ական թվականների վերջերին՝ ապոլինարականների դեմ պայքարում, մերժել է նաև «մարդաբանական մինիմալիզմը» և հանդես է եկել հակադիր «մարդաբանական մաքսիմալիզմի» վարդապետությամբ: Դիոդորոսի համար առանցքային է եղել Քրիստոսի մարդկային բնության հիմնահարցի մեկնաբանությունը: «Նա Առաջնային է մարմնով, Միաձին՝ Աստվածությամբ: Առաջնաձին է, քանի որ Նա մեր սեռից է. Միաձին, քանի որ Աստծուց է» (էջ 147):

Քրիստոսի մարդկային բնությունը Դիոդորը հետևյալ կերպ է մեկնաբանում. «Մարդիամի Որդին իրեն դրսնորել է իբրև մարդ: Նա հոգնում էր և հազուստ կրում: Նա քաղցում էր և ծարավում: Նա խաչվեց. Նրա կողը խոցվեց ու այնտեղից դուրս հորդեց արյուն և ավիշ: Եվ նա մահացավ ու մաքրագործվեց, այնուհետև հարություն առավ» (էջ 149): Եզրակացություն. Փրկիչը «Բանական հոգով մարդ է» (էջ 154):

Երկրորդ ենթագլուխ՝ «Թեոդորոս Սովուեստացու քրիստոսաբանական վարդապետությունը»:

Թեոդորոս Սովուեստացու նկատմամբ մատենագրության մեջ եղել է անհանդուրժականություն, քանզի նա համարվել է Կ. Պոլսի նախկին պատրիարք՝ «Նեստորի քրիստոսաբանական հայացքների հայրը և ուսուցիչը» (էջ 166): Թեոդորոսի վարդապետության համաձայն՝ Աստված անտես և անմարմին, հավիտենական, անփոփոխ և ինքնազնի էություն է: Նա միաժամանակ պնդել է դավանական այն հիմնադրույթը, որ Ս. Երրորդությունը միաստվածություն է (էջ 168): Աստված Բանը մարմնավորումից առաջ և հետո գոյաբանական ոչ մի հարաբերություն չունի մարդկային բնության հետ:

Արդյունքում՝ Թեոդորոսը մերժում է նաև Սարիամ Աստվածածին լինելը:

Հաջորդ ենթագլուխում «Ալեքսանդրիական քրիստոսաբանական վարդապետությունը» ներկայացվում է ընդդիմադիր ըմբռնումների դեմ դավանաբանական պայքարը:

Աթանաս Ալեքսանդրացին անդրադարձել է Աստված Սարդի մարդկային բնության աստվածաշնչագիտության դիրքերից, Քրիստոսի մարդեղացումը բնութագրել է ինչպես «մարմնացում», այնպես էլ «մարդացում» եզրերով, քննարկել է փրկագործական վարդապետության հետ սերտ կապի մեջ: Մարդացման ընթացքում, ըստ նրա պարզաբանման, «մարդացած Աստված-Բանի մարմինը Իր հետ միասին է Աստված կոչվում» (էջ 202):

Չորրորդ ենթագլուխ՝ «Կապադովկիական դպրոցի քրիստոսաբանական հայեցակարգեր»:

IV դարի վերջին քառորդում Հռոմեական Արևելքի կրոնական կյանքում քրիստոսաբանական մշակումների և հերձվածների մերժման գործում իր լուման ունի եկեղեցական հայրերի դպրոցը, որի ականավոր ներկայացուցիչն է Գրիգոր Նյուսացին: Նրա կարծիքով՝ Քրիստոսի երկու կատարելության (Աստված Բանի և մարդկային մարմնի) անխառն և անշփռ միություն է: Նա Քրիստոսի բնությունների փոխհարաբերությունը բնութագրում է «Ճշմարիտ և անբաժան», ինչպես նաև՝ «Ճշմարիտ միություն» եզրույթներով:

Կապադովկիական դպրոցի վարդապետությունը ուղղված է եղել դարաշրջանի

Քրիստոսարքանական գլխավոր ծայրահեղությունների դեմ: Հաղթահարել են Ապողինարի քրիստոսարքանության բնորոշ թերությունները, զարգացրել են ուղղաղավառ քրիստոսարքանական ուսմունքը:

Երրորդ գլուխ՝ «Քրիստոսարքանական դավանական վեճերը 420-430- ական թվականներին».

Առաջին ենթագլուխ՝ «Քրիստոսարքանական դավանական վեճերի սկիզբը: «Աստվածածին եզրի ըմբռնումը»:

Հստ ատենախոսի՝ մինչև IV դարի 60-ական թվականները քրիստոսարքանական վարդապետական վեճերը համակարգակին բնույթ չեն ունեցել: Շարունակում էին միայն դոկտրինալ հակազդեցությունները (եջ 271): Միաժամանակ պատմական ասպարեզ է իշխում Կ.Պոլսի պատրիարք Նեստորի ուսմունքը, որը ստանում է «քրիստոսարքանական մեծ վեճ» անվանումը: Նա, իրեն նվիրաբերելով հերձվածների դեմ պայքարին, ինքը ևս դարձավ բավականին ազդեցիկ հերձվածի հիմնադիր:

Արմատապես մերժելով Սարիամ Աստվածամայր լինելը՝ Նեստորը պնդել է, որ Սարիամը փրկազործութուն իրագործող Աստված չի ծնել և Ս. Հոգին Ս. Երրորդության Անձինը Աստված Բանին չի կազմավորել: Սարիամը ծնել է միայն մարդու, որի մեջ բնակվել է Բանը, նա ծնել է մեր փրկության որպես մարդկային գործիքը (եջ 286): Նեստորի մարմանարքանական հայեցակարգը, ինչպես նշում է ատենախոսը, հակադրվել է եկեղեցական ավանդությանը: Նա մերժում է «Աստվածածին» լինելու դավանարքանական ըմբռնումը (եջ 291): Ատենախոսը եզրակացնում է. «Այդ ամենը փաստում են, որ արմատական վերանայման կարիք ունեն մասնագիտական զրականության շրջանառվող այն պնդումները, թե իրը Նեստորն ամենեին չի մերժել «Աստվածածին» եզրույթի գործածությունը (եջ 297):

Երկրորդ ենթագլուխ՝ «Քրիստոսի անփնավորման եվ դիմային միության Նեստորի քրիստոսարքանական վարդապետությունը»

Նշում է, որ Նեստորի բանաձեռումը Քրիստոսին՝ «մեկ դեմքով երկու բնություն», ունի եկեղեցական ավանդությանը հակադիր մեկնարքանություն: (եջ 325): Նեստորի քրիստոսարքանական համակարգի համար մերժելի է եղել նաև «հատկանիշների փոխանակությամբ» վարդապետությունը: Նրա վարդապետության քննադատության գործում առանցքային է եղել Հիսուսի, Լոգոսի և Քոհիստոսի հատկանիշների

տարանջատելու միտումը (էջ 349): Մերժվում է XIX – XX դարերում ձևա-վորված Նեստորի «արդարացման աստվածաբանության» մոտեցումը:

Հաջորդ ենթագլխում՝ «Կյուրեղ Ալեքսանդրացու քրիստոսաբանական վարդապետությունը», ներկայացվում է, որ նա իր դավանաբանական ձևակերպումները մշակել և հղկել է ըննդիմադիր դավանաբանական հոսանքների հետ ունեցած երկխոսության շրջանակում: Իսկ քրիստոսաբանական վարդապետությունը մշակվել է ընդդեմ Նեստորի և նեստորական աստվածաբանության դեմ պայքարում: Հավատքի մեկնաբանության գործում նա կարևորել է նաև չափավոր բանականության դերը և փաստել, որ միայն հավատքով պետք է ընդունել այն, ինչը վեր է բանականությունից: Հավատքն այն մուտքն է, որը բանականությանը տանում է դեպի աստվածային լույսի գիտակցում (էջ 354,355): Կյուրեղը նաև մտցրեց Քրիստոսի երկու բնությունների անձնավորման միասնության հասկացությունը, որը նա կիրառում էր այն նույն իմաստով, ինչ իմաստով կիրառում էր բնությունների միասնության արտահայտությունը(էջ 390):

Եզրակացությունների բաժնում ներկայացված են ատենախոսության հիմնական դրույթները ու եզրահանգումները:

Ատենախոսությունը գերծ չէ թերություններից:

- ցանկալի կլիներ, որ ատենախոսը ներկայացներ ոչ միայն Հռոմեական կայսրության տիրույթներում ընդհանուր դավանաբանական հոսանքների պայքարը, այլ նաև նրանց արձագանքները Հայոց եկեղեցում.
- ատենախոսությունը կշահեր, եթե տրվեր հարուստ աղբյուրների տիպային դասակարգումը.
- Ատենախոսության ժամանակագրական սահմաններն են 160-420 թթ. (էջ 5), սակայն կարիք ունեն որոշակի պարզման, քանզի էջ 12-ում նշվում է 160-430 թթ., իսկ էջ 9-ում խոսվում է 160- V դ. I քառորդում.
- Այլ մանր վրիպակներ ես կան:

Այդուհանդեռձ, նշված թերությունները չեն նսեմացնում Հովհաննես Վահագնի Հովաննիսյանի կատարած գիտական ուսումնասիրության արժանիքները: Քննար-

կման ներկայացված ատենախոսությունը աղբյուրագիտական խորը և բազմակողմանի ուսումնասիրություն է: Հովհաննես Հովհաննիսյանի կողմից հրապարակած մենագրությունը, հոդվածները և սեղմագիրը հիմնականում համապատասխանում են հետազոտության բովանդակությանն ու ատենախոսությունում արձարձված հիմնական դրույթներին: Աշխատանքը շարադրված է գրագետ, պահպանված են հիմնախնդրի լուսաբանման հաջորդականության ընդունված կանոնակարգերը:

Հովհաննես Վահագնի Հովհաննիսյանին հաջողվել է ստեղծել գիտական մի աշխատանք, որը լիովին համապատասխանում է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցմանը: Ուստի միջնորդում ենք ԲՈԿ-ի 068 մասնագիտական խորհրդին՝ Հովհաննես Վահագնի Հովհաննիսյանին շնորհել պատմական գիտությունների դոկտորի աստիճան՝ իր հայցած թ.00.05 «Կրոնի տեսության և պատմագիտություն» գծով:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Պատմության ինստիտուտի առաջատար
մասնագետ, պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Հ. Բայց

Վալերի Գեորգու Թունյան

Հաստատում եմ՝ Պատմության ինստիտուտի
գիտական քարտուղար պ.գ.թ., դոցենտ

Հ. Բայց

Հ. Դ. Մուրադյան

24 հունվարի 2020 թ.